ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ՝ԺԱՄԸ 11:00-ԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԻ ՍԱՀՄԱՆԱԾ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով, «Իմ քայլը» խմբակցությունը որոշում է.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2020թ. Հունիսի 30-ին՝ ժամը 11:00-ին նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետներում Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելուն համաձայնություն տալու մասին (կից հիմնավորմամբ):

Հիմնավորում

2020 թվականի հունիսի 26-ին ուժի մեջ են մտել 2020 թվականի հունիսի 22-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունները: Ըստ այդմ, հունիսի 26-ից ուժի մեջ է Սահմանադրության 213 հոդվածի նոր խմբագրությունը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի մի շարք կարգավորումներ հակասում են Սահմանադրության 213 հոդվածին: Ուստի անհրաժեշտ է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը համապատասխանեցնել Սահմանադրության 213 հոդվածի պահանջներին:

2020 թվականի փետրվարի 6-ի «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին» Ազգային ժողովի որոշմամբ հանրաքվեի դրված Սահմանադրության փոփոխությունների նախագծով առաջարկվող իրավակարգավորումը մասնակի իրացված են 2020 թվականի հունիսի 22-ին Ազգային ժողովի կողմից ընդունված Սահմանադրության փոփոխություններով, որոնք 2020 թվականի հունիսի 26-ից ուժի մեջ են մտել: Ըստ այդմ, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել Ազգային ժողովի 2020 թվականի փետրվարի 6-ի «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին» Ազգային ժողովի որոշումը:

«ԻՄ ՔԱՅԼԸ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԼԻԼԻԹ ՄԱԿՈՒՆՑ